

891.995

Փ - 31

ՎՐԹ ՓԱՓԱԶՅԱՆ

ՎԻՇԱՊ



ՊԵՏՅՐԱՏ

801.99 Ե

Փ - 31 Խ

2011-07


ՎՐԹ. ՓԱՓԱԶՅԱՆ

Վ Ի Շ Ա Պ

Նկարները Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Հ Ա Յ Պ Ե Տ Ր Ա Տ

ՀԻԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Ց Ե Ր Ե Վ Ա Ն 1940



1

Վաղուց, յերևի շատ դարերից ի վեր, այն մաքուր և հորդառատ ջուրը, վոր բղխում էր լեռներից, գնում էր վտուղելու ստորոտի դաշտերը և դարձնում նրանց հարուստ անտառներ, պարարտ, արդյունաբեր արտեր ու գեղաձիճաղ մարդապետիններ:

Գաղարի նմանող մի գյուղ ծաղկում էր ջրի ափերին: Ծառաստան և այգի զարդարում էին նրան. յերկիրը, լի ցնծությամբ, արտադրում էր շատ բարիք, մարդիկ յերջանիկ էին այնտեղ. հավասարապես վայելում էին ջրի բաշխած հարստությունը, ճաշակում՝ նրա արդյունքը:

Վաղուց, գուցե դարերից ի վեր էր, վոր այդ մաքուր ու հորդառատ ջուրը վո՛չ ցամաքում էր, վո՛չ դադարում, վո՛չ էլ պակասում: Գարնանը հորդանում էր, քիչ պղտորվում, սակայն տարվա ամեն յեղանակին կար նա, հասում էր անընդհատ, խաղում ափերի հետ, վտուղում նրանց:



В. ПАПАЗЯН
ДРАКОН

Гиз. Арм. ССР, Ереван, 1940 г.

Բայց յերկար չտեվեց այդ:

Մի որ հանկարծ խուլ հուզումն առաջացավ նրա ափերի վրա: Մարդիկ իրար անցան, խմբվեցին, գետը զննելու իջան և վճռեցին վոր ջուրն սկսել էր նվազել:

Թեև սակավ առ սակավ, բայց արագ կերպով նըվազում էր նա, ափերը թողնում և բոլոր արտերին ու մարգերին վռնողելու չէր բավականացնում: Այդպես յեթե գնար, մի քանի տարուց հետո ջուրը վնչ միայն կես կարող էր լինել, այլև գուցե բոլորովին դադարեր:

Այն ժամանակ ինչ պիտի լիներ գյուղացիների զբոսթյունը: Չէ վոր արդեն սկսում էին չորանալ արտերը, բերքը նվազում էր, այգիները ջուր չունենալուց, ծարավից խամրում էին, ծառաստանները կորցնում էին աճելու ուժը և մարգագետիններն այլևս չէին ժպտում առաջվա պես՝ իրենց թավշանման շքեղ կանաչովը:

Ամբողջ յերկիրը կարող էր վոչնչանալ, պետք էր մեծար մտածել, ջրի սպառվելու դեմն առնել:

Բայց դրա համար ամենից առաջ, հարկավոր էր նոր փորձանքի պատճառը վորոնել ու գտնել:

Յեվ ահա հավարվեցին գյուղացիները խորհրդի ապա բաժանվեցին, լեռներն յեւան ջրի ակունքը գտնելու, այլև հետազոտելու այն ամեն ճյուղերը, վորոնցից գետը հորգանում էր և մեծանում:

Մեծ գետ էր այն: Բուն ակունքը սկիզբ էին առնում մի մուխ և ժայռոտ սարի կրճքից, ճանապարհին, մոտ 4—5 տեղ էլ, զանազան լեռներից գալով խառնվում էին նրան՝ խոշոր ուրիշ վտակներ, իսկ լեռնաշղթալի ստորոտում, խոր ձորակի մեջ, այդ ամենը միացած՝ ձվանում էր մի ջրաշատ գետ:

Այդ բոլորը զիտեյին գյուղացիների այն խմբերը, վորոնք հետազոտության յեւան:

Առաջին խումբը բռնեց բուն ակունքի ճանապարհը, մյուսը ձորը մտավ, մտածելով վոր գուցե լեռներից խոշոր ժայռեր էլին գլորվել, փակել ջրի ընթացքը և փոխել հեղեգատը:

Յերրորդ խումբը քայլեց գլխավոր ճյուղն ի վեր, դեպի լեռնաշղթայի ծործորները, իսկ յերկու մյուսները, բահերով ու թիչերով զինված, զնացին մաքրելու մյուս ճյուղերի ակունքը, յենթադրելով վոր յցվել էին նրանք ավազով և կամ փուխը բլուրներ փլած՝ նրանց ընթացքն էին շուռ տվել:

Մինչ այդ, դաշտի ընակիչները լուրերի սպասելով նկատում էին, վոր վնչ միայն ջուրը չէր մեծանում, այլ ավելի և ավելի յեր պակասում:

Խմբերից շատերն այդ միջոցին, հողնեցուցիչ տաժանելի ճանապարհներով, քայլեցին վտակներն ի վեր: Վնչ մի հողաթումը չէր փլել, վնչ մի ժայռ չէր գլորվել և ջրերի հեղեղատները չէին փոխվել: Նկատեցին միայն, վոր նույնիսկ վտակները փոքրացել էին, իսկ թե վերտեղ էին անհետանում ջրերը կամ ինչպես, ինչ ճանապարհով—վոչ վոք իմանալ չկարողացավ:

Տասնհինգորչա յերկար շրջագայությունից հետո, բոլոր խմբերը կենտրոնացան ակունքի մոտ և խորհրդի նստան:

— Ակներև ե,—խոսեց մեկը.—գետի ջրերը պակասում են. բայց թե ինչպես կամ ուր են գնում—մենք այդ իմանալ չկարողացանք:

— Ինձ թվում է,—խոսեց մի ուրիշը,— վոր վտակների տակ անդունդներ են գոյացել և կլանում են ջրերին:

— Պտույտներ պիտի լինեյին և կամ մի այլ նշան՝ առարկեց մի յերկրորդը՝ մինչդեռ վնչ մի այդպիսի նշան չկա:

— Այն, չկա. բայց կա այն փաստը, վոր ջրերը կը-

լանվում են և մի ամբողջ հասարակության ծարավ թողնում:

— Գուցե անհայտ չարագործներ, ստորյերկրյա, վարպետությամբ շինված ճանապարհներով գողանում են ջրերը.— հայտարարեց մի փորձառու գյուղացի:

— Այդպես բանի նշան ել չկա:

Ու յերկար վիճում ելին նրանք, թեր ու դեմ կարծիքներ, գանազան յենթադրություններ առաջադրում: Առաջարկում ելին ցնորական, յերիխայական, առ ժամանակյա շատ միջոցներ, սակայն իսկույն ել գանում ելին, վոր դրանցից վնչ մեկը յերկարատև լինել չեր կարող յեթե նույնիսկ հաջողվեցին մի տարի, հսկայական ուժ գործ դնելով, ամբարել ջրերը, դաշտերին բավականացնել: Այնուամենայնիվ գետը անընդհատ պակասում եր և կարող եր լիովին չորանալ:


Յերբ այդպես տաք վեճի մեջ ելին, հանկարծ մի յերիտասարդ, վոր հայտնի չեր հայրենակիցների մեջ վորպես այլանդակ մտքեր արտահայտող ու յերևակայող մի «խենթ» — գոչեց այն կողմից.

— Լսեցեք ինձ կասեմ ձեզ, յեղբայրներ: Մեր ջրեր կլանողը վնչ այս ե, վոչ այն: Դա մի վիշապ ե, վոր բուն ե դրել լեռներում և հետզհետե ցամաքեցնում ե մեզ կյանք տվող աղբյուրները. մի վիշապ ե դա — ահա ճրջմարտությունը:

Բարձրացավ ընդհանուր բրբիջ, հետո ծաղրի կարկուտ թափվեց խենթի գլխին:

Բայց սա անվրդով, հետզհետե ավելի հաստատուն ու վճռական, ասում եր.

— Կրկնում եմ ձեզ, յեղբայրներ. մի վիշապ ե այն, վոր մտել ե մեր լեռների մեջ: Շուտով յեղած ջուրն ել կցամաքեցնի. պիտի տեսնեք: Կլանելով ջրերը՝ ինքը կըմեծանա, նրա ծարավն կաճի, խմելու փափաղը կավելանա և այլևս ջուր չգտնելով, կգա մեր արջուկը խմելու...



Այդպես խոսեց «խենթ մարդը» և նրա յեղբայրները վնչ միայն ծաղրեցին նրան, այլև նախատեցին, ջանացին լռեցնել, հետո ծեծեցին ու ստիպեցին, վոր դադարեր հիմարութուններ ասելուց:

Բայց նա գոչում եր համառությամբ.

— Վիշապ ե ասն, յեղբայրներ, ասում եմ ձեզ: Քանդեցեք ահունքը և կտեսնեք. հետազոտեցեք, խորքերը մրտեք և պիտի հասկանաք... Մնվել ե նա, կարճամիտ յեղբայրներ. և ծնվել ե մեր միջից, մեզից ե ծնվել...

— Մեզնից ե ծնվել,— գոչեց գյուղի իշխանը բարկացած, ասում ես մեզնից: Խենթ, ասա տեսնեք, մի հիմարություն ել ասա և հայտնիր մեզ թե ինչ կին ե այն, վոր վիշապ ե ծնում. կամ վորտեղից, ինչո՞ւ ծնավ նա:

Ու ծիծաղում եյին, վորովհետեմ վնչ վոք չեր լսել, վոր մարդկանցից կարող եր վիշապ ծնվել և այդ վիշապը, մի ամբողջ գետ կլանելուց հետո, կարող եր յելնել ու մարդկանց արյունը խմելու գալ:

— Խոսիր,— գոչեցին գյուղացիք խենթին. տեսնեք, գուցե քո մայրն ե ծնել այդ յերևակայական վիշապին, յեթե միայն նրան ծնողը քո հիվանդ ուղեղը չե: Խոսիր, ինչից ե ծնվել նա:

— Ձեր քրտինքից...— ասաց խենթը և այնուհետև ալևա չխոսեց:

Յեմ ինչո՞ւ խոսեր: Միմյանց յետևից միայն այլանդակություններ եր ասում: «Քրտինքից ծնած վիշապ»: Իսկ մի այնպիսի խենթ միտք եր, վոր հավերի ծիծաղն անգամ կշարժեր, ինչ մնաց խելքը գլխին, վորձառու, շատ բան տեսած գյուղացիների և պատկառելի իշխանների:

2

Ահա այդպես եր, վոր վիշապի գոյության միտքը ծագեց մարդկանց մեջ:

Թեև գետը արդեն կես եր յեղել և սպառնում եր շուտով մի առվակ դառնալու, սակայն գյուղացիք շարունակեցին ծիծաղել յերևակայական վիշապի վրա և ջի նվագելը համարում եյին վորեւե բնական պատճառի արդյունքը:

Բայց «խենթը մի քար գլորեց, հազար խելոք չկարողացան հանել»: Այդպես ել յեղավ: Վիշապի գոյության գաղափարը— վորքան և խելոք մարդիկ ծաղրեցին նրան— համակեց ժողովրդի «պակասամիտ» դասի միտքը: Տարիներ հետո, յերբ մեծ գետը այլևս չնչին առվա եր դարձել, և գեղածիծաղ այգիները, դաշտերն ու մարգերը չորացել եյին— գտնվում եյին դեռ «խենթանման մարդիկ», վորոնք ջրի պակասելու և վոչնչանալու մեջ՝ հանցավորը համարում եյին վիշապին:

Քիչ եր գտնվում, իրավ ե, բայց կար: Վորեւե գաղափար շուտ չի մտնում ամբոխի մեջ. բայց յերբ մըտնում ե, շուտ չի դուրս գալիս:

Գտնվեցան մարդիկ, վորոնք վերջ ի վերջո վճռեցին զնալ դեպի ահունքը, փորել խորը մտնել, ստուգել վիշապի գոյությունը, և յեթե կար՝ սպանել ու մեռնող յերկիրը կենդանացնել, նրա անցյալ յեռուն կյանքը վերականգնելու:

Իսկ խենթը, վոր դեռ կենդանի յեր, վոր դեռ պընդում եր վիշապի գոյության մասին— հանձն առավ նրանց գլուխն անցնել և հարստահարողի դեմ կռիվ գնալ:

Ամբողջ գյուղը հետևեց նրանց: Վոմանք, վորովհետև գնացողների հայրերը կամ յեղբայրներն եյին և շատերը, վորովհետև այդ հետազոտությունը հետաքրքիր եր:

Յեմ գնացին վորոնոգները, քայլեցին յերկար, որերով ու շաբաթներով, հասան ջրի գլխավոր ահունքին,— այն խոժոռ լեռների և մեծ ժայռերի ստորոտը: Հետո բահերն ու բրիչները ցած դրին, նստեցին ծրագիր կազմելու...

Յերբ խենթը տեսավ վոր մարդիկ նստում են ծրագիր կազմելու, կանգնեց նրանց մեջ և ասաց.

— Ո՛ր, վո՛չ, յեղբայրներ, մի նստեք հանգստանալու, քանի վոր վիշապը կենդանի յե, մի ժողովվեք յերկար՝ ծրագիրներ կազմելու համար: Հարցը շատ պարզ ե: Ծնվել ե վիշապը, վոր կլանում ե մեր ջուրը և մեզ թողնում ե ծարավ: Պիտի պեղել նրա յեղած տեղը և նրա գլուխը պիտի ջախջախել: Սրանից պարզ ու կտրուկ միջոց չկա: Վտաքի յեղեք և գործը սկսենք:

— Բայց չե՞ վոր, — ասաց մեկը, — հարկավոր ե հաշվի առնել նաև մեր ուժերը, տեսնել թե կարո՞ղ ենք ջախջախել վիշապին: Գուցե նա շատ մեծ ե, գորեղ, և կարող ե մեզ բոլորիս կլանել:

— Այո, — ասաց խենթը. յերբ նա նոր եր ծնվել, լապանելը ավելի հեշտ եր: Բայց ահա յերկար ապրեց և գիրացավ մեր ջրով: Այժմ նրա ստամոքսը ավելի մեծ, կըլանող բերանը ավելի լայն ե դարձել. շատ դժվար ե վոչնչացնել նրան, առանց գոհեր տալու, առանց արյուն թափելու:

— Տեսնում ես, — խոսեց մի գյուղացի, — ուրեմն մեզ ավելի յերկար պետք ե խորհել, ծրագիրներ կազմել և կըզվելու պատրաստվել այդ հրեշի դեմ:

— Այո, բայց մինչ դուք կխորհեք ու ծրագիրներ կկազմեք — նա կյորեղանա, ամբողջ ջուրը կկլանի և մեզ բոլորիս ծարավ կթողնի: Նա աճում և գորեղանում ե ժամ առ ժամ, նույնիսկ ըսպե առ ըսպե:

— Ի՛նչ արած, — առարկեցին շատերը, — պիտի լխորհել, մտածել...

Ու շարունակեցին խորհել, մտածել:

Խենթը մնաց մենակ: Նրան չլսեցին, նրա շտապեցնելը ծիծաղելի գտան:

Բայց նա մենակ առավ բրիչն ու բահը, իջավ լեռների խորքերը և վորոնեց:

Գյուղացիք հեռու նստած՝ խորհում էյին ու ժպտալը դեմքին գիտում խենթի արածը:

— Յեթե իսկապես հրեշ կա, — ասում եր մեկը. — անպատճառ իր շնչովն անգամ լինի, վայրկենապես կվոչրնչացնի այդ խենթին:

— Ծիծաղելի կլինի տեսնել, թե ի՛նչ այլանդակ դեմք պիտի ստանա խենթը, դեմ առ դեմ գալով վիշապին:

Իսկ խենթը փորում եր, աշխուժով փորում: Նրա բրչի հարվածից դրդում եր լեռը, թնդում եր գետինը: Յեվ ժայռերի խորքում լավում եր խուլ մռնչյուն, քանի վոր խենթի հարվածները արագանում էյին, այնքան մեծանում եր:

— Հրեշն ե... գունատ և դողդոջուն՝ դոչեցին գյուղացիք յետ-յետ գնալով:

— Զգո՛ւյ՛ջ լինենք, — խրատեց մեկը. — ավելի լավ ե հեռու կանգնենք և նախ տեսնենք թե ինչպե՞ս կվարվի խենթի հետ...

— Մի պատառ կանի նրան, — ասաց յերկրորդը:

— Մի վայրկյանում կհոշոտի. չե՞ք լսում թե ինչպիսի ձայներ են լավում խորքերից:

Յեվ իրավ, մռնչյունը սաստկանում եր, գայլալից դառնում:

Հրեշը բարկանում եր, վոր համարձակվել էին այդպես խորքը մտնել և իրեն անհանգիստ անելու գալ:

Բայց խենթը պեղում եր: Նրա բրիչը ժայռեր եր դեռ ու դեն նետում, քարեր գլորում և սուր ծայրովը մտնում մինչև հրեշի բնակարանը:

Յեվ այդպես, մինչև յերեկո, առանց դադար առնելու, փորեց խենթը, պեղեց, բրչի հարվածներ տվավ:

Յեվ յերբ յերեկո լեր դարձել ու վերջին կարծր քարն եր ջարդում նա, ականջները գրեթե լսացել էյին վիշապի գայլաղին աղաղակներից:

Գյուղացիք սարսափած, գունատ և սրտատրոփ՝ հեռվից նայում էյին այդ բոլորին. վոչ վոք սիրտ չաբավ մի քայլ անելու, խենթին ոգնության ձեռք տալու: Ամեն վոք իր կաշվիցն եր վախենում, ամեն վոք կամենում եր վտանգից հեռու լինել, թեկուզ ծարավ, թշվառ ու կիսամերկ մնալ միշտ:

Յե՛վ յերբ բըշի մի ուժգին ու ծանր հարվածի տակ գլորվեց վերջին ժայռը, ահաբեկ գյուղացիների առաջ յերևան յեկավ հրեշի ալյանդակ, սոսկալի գլուխը, վոք բերանը դեմ եր ավել բոլոր ջրերին և անկշտում կլանելով ուռում եր, հաստանում:

Իսկ յեթե դեռ հոսում եր քիչ ջուր, դա յել նրա ջրթունքների անկյուններից դուրս յելնող թափցուկն եր միայն, հրեշային գարշ լորձուների հետ խառնված:


Վիշապը յերբ տեսավ բրիչը ձեռքին և իր գլխի վերևը կանգնած խենթին—մոնչաց, կովային աչքերը վոլորեց զայրալիր և գոչեց վորոտաձայն.

— Հեռու, հանդուգն, թե չե՛ կվոչնչացնեմ... Բեզ նման խենթերի յես շատ եմ կուլ տվել այն ժամանակվանից ի վեր, յերբ առաջին մարդը ճնշեց իր յեղբորը, խլեց նրա ունեցածը, յերբ կալենը սպանեց Աբելին... Գրնա, քանի չեմ վոշիացրել քեզ, անմիտ: Բեզ նման խենթերը թեև գտնում են ինձ, բայց չեն կարող վոչնչացնել: Ինձ վրասել կարող ե միմիայն այդ ամբոխը, ահա, վոք այժմ ահաբեկ՝ դողում ե վոտքերիս սուռը...

Յե՛վ շարունակեց կլանել ջուրը:

Խենթը բարձրացրեց բրիչը, ուժգնությամբ որորեց և բուռն թափով նետեց դեպի հրեշի գլուխը:

Բրիչը սուլեց, գնաց քերթելու գաղանի գլխի կաշին բաց ուժգնությամբ կպավ կողքի ժայռերին, շարժոտեց նրանց և հեռվում դիտող գյուղացիներից շատերին վերափորեց:



Այդ վոր տեսան գյուղացիք, զայրացան, հուզվեցին, հետո խմբվեցան, քարեր վերցրին և քարկոծեցին խենթին:

Իսկ հրեշը մի մեծ քրքիչ արձակեց և ասաց.

-- Տեսա՞ք, մարդիկ, տեսա՞ք, վոր այդ խենթերը ինձ դեմ կովելով՝ միմիայն ձեզ են վնասում: Քարկոծեցեք այդ տխմարներին. ձեր թշնամիներն են, ձեզ մուրեցնում են դրանք... Մինչդեռ յես եմ ձեզ կերակրողը, ձեր բարերարը... Յեվ վորովհետև յեկել եք այժմ ինձ խնդրելու, ահա խոստանում եմ, վոր ել ավելի բարի կլինեմ զեպի ձեզ. ծարավ չեմ թողնիլ, վորովհետև շրթունքներս անկյուն ունեն և անկյուններից ձեզ բավականացնելու, ձեզ ծարավությունից չմեռցնելու չափ ջուր թափվում ե...

Յեվ գյուղացիք դողալով՝ լսեցին հրեշի այդ բարեփրական խոսքերը:

Քարկոծեցին, լեռների բարձունքները քշեցին խենթին, հետո ծունկի չեկած՝ շնորհակալ չեղան վիշապից և ուրախ վերադարձան գյուղ:

— Խոստանում եմ, — ավելացրել եր հրեշը, — ձեզ ծարավ չպիտի թողնեմ, շրթունքներիս անկյունները քիչ ավելի կբանամ, չերբ դուք չափազանց ծարավութուն չգաք...

Ու այդ խոստումը, պիտի խոստովանել, մեծ աղնրվությամբ կատարում ե նա մինչև այսօր: Շրթունքները յերբեմն քիչ ավելի յե բաց անում, մեղմացնելու համար ան ծարավի լինին, վորոնք տառապանքներից պատրաստ են խենթանալու:

Այդ որվանից ահա, ամբոխը պաշտում ե հրեշին վորպես բարերարի. շինում ե նրա համար տաճարներ, իսկ նրա դեմ խոսող խենթեցին քշում ե դեպի լեռների բարձունքները...


Այստեղ կվերջանար արդեն զրույցը, յեթե պետք չլիներ ևս մի դեպք պատմել:

Այդ ան է, վոր մի որ հայտնվեցան մարդիկ, վորոնք յերազ ելին տեսել, վոր մտա է, իբր թե, հրեշի վոշընչանալու որը և վոր նրանք յերազի մեջ տեսել էին հրեշն սպանողին անգամ:

Ու նկարագրում եյին այդ սպանողին. վոր իբր թե հուժկու մի մարդ եր կաշվե գոգնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կոան բռնած...

Պատում եյին այդ յերազատեսները նույնպես, վոր իբր թե կաշվե գոգնոցով հսկան մեծ քայլերով զնում եր դեպի հրեշը. և վիշապը լսելով նրա քայլերը, կծկվում եր ու ձգնում ավելի խորը մտնելու...

1903 թ.



Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավխաի լրագոր՝ Բ—1021 Հրատ. 5109.

Պատվեր 1. Տիրած 4000.

Քուղթ 62×94. Տպագրակ. 3/4 մամուլ.

Հանձնված է արտագրության 2 հունվ. 1940 թ.

Ստորագրված է տպագրության 17 հունվ. 1940 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0408345

13520.

ԳՐԱԸ 75 ԿՈՊ.

В. ПАПАЗЯН
ДРАКОН
ИЗД. Арм. ССР ЕРЕВАН 1940

21